

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի «Ձատիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի պարուսույց-մանկավարժի՝ 1 դրույք, շաբաթական՝ 24 ժամ /ըստ դասացուցակի/ թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում
- կրթության մասին փաստաթուղթ /դիպլոմ/
- անձը հաստատող փաստաթուղթ
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ /առկայության դեպքում/
- ինքնակենսագրություն /Ձև 4/
- մեկ լուսանկար՝ 3x4
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համարել փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են հունիսի 24-ից հուլիսի 22-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9:00-ից 15: 00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:  
Մրցույթը կկայանա հուլիսի 27-ին:

Հասցե՝ Վայոց ձորի մարզ, ք. Ջերմուկ, Ձախափնյակ 2/3, «Ձատիկ» մանկապարտեզ

Տեղեկությունների համար զանգահարել՝ +37498175071, +37477166511, +37491555584  
հեռախոսահամարներով: